

կենցաղավարութեան կենդանի, բարի օրինակներ, նոցա հետ միասին և առանձին խոհեմ ձեռնարկութիւններ ոչ սակաւ տարբեր միւս ուսանելի առարկաների ձեռնարկութիւններէից և եղանակներէից: Ուստի և թարգմանեցի Ռուսերէնից Շ. Փարցանուն Չ. երմանացի հեղինակի հետևեալ յօդուածը, ընդհանրապէս կրօնի դաստուութեան մասին, յուսալով, որ ոչ սակաւ օգուտ կարող են քաղիլ և մեր ուսումնարանների կրօնուսոյցները, ի գործ դնելով նորա մէջ պարունակուած միջոցներից նրանք՝ որոնք յարմար և ձեռնտու են մեր ուսումնարանների ուղղութեանը և ոգւոյն:

ԴԱՍԱՍԱՅՈՒԹԻՒՆ ԿՐՕՆԻ.

Արօնը, այս ինքն զիտակցական կապը մարդոյ Աստուծոյ հետ, չէ ոչ դիտութիւն և ոչ ճարտարութիւն. ուստի և չ'է կարելի ուսանիլ նրան այս բառի հասարակ մտքովը. նա գործ է սրտի և կամբի, կամ լաւ ևս ասել՝ բանականութեան, և պարունակում է իւր մէջ նմանապէս բարոյականութիւն. այս պատճառաւ իմացական ընդունակութեան միջոցով՝ նորա զարգացման վերայ՝ միայն կողմնակի կերպով կարելի է ներգործել: Արօնի մէջ պէտք է կրթել՝ և ոչ ուսուցանել նրան: Այս տեղ դասասացութեան եղանակներից շատերը անյարմար են, կամ գոնէ ուղեկից չ'են այնպիսի յաջողակութեամբ՝ ինչպէս ուրիշ ուսանելի առարկայից մէջ: Ընտանիքը (1), եկեղեցական ծխակա-

տարութիւնները (2), հասարակական բրնաւորութիւնները, քաղաքական սովո-

ցանկացած պարզ և ուղիղ գաղափարները Հաստատանայց կրօնի. նոցա մէջ ուսեալ և բարեկիրթ մայրեր սակաւ գտնուելու պատճառաւ, որոնցից կախուած է մի ընտանիքի ուղղութիւնը և բարեկարգութիւնը ըստ ամենայն մասանց և որ առաւել փնասարերն է, ինչպէս ես ինքնս ականատես եղած եմ, շատերը մեր Հայ հարուստ ընտանիքներից պահում են իւրեանց մանուկների դաստիարակութեան համար այլազգի և այլադաւան դաստիարակուհի մեծամեծ վարձքով, որը ի հարկէ մանուկների այլևայլ ուսմանց և բարոյակաւնութեան վերայ ազդեցութեան հետ միասին՝ նոցա կրօնական զգացմանց վերայ ևս կարող է ազդեցութիւն ունենալ, մինչդեռ այն վարձքովը որը վճարում էին այն այլադաւան դաստիարակուհւոյն, այնպիսի հարուստներից մի քանիքը անգամ կարող էին բանալ մի օրինաւոր ազգային օրիորդական դպրոց, որի մէջ և պատրաստել մի քանի տարուայ ընթացքում ուսեալ Հայ դաստիարակուհիք ինչպէս իւրեանց՝ նոյնպէս և հասարակաց զաւակներին մեր ազգային և կրօնական անխառն դաստիարակութիւնը մատակարարելու համար, առաւել ևս զարգացում և պայծառազարդութիւն տալով Հայկական կեանքի սեպհական ազգային և կրօնական բնաւորութիւններին և սովորութիւններին, որոց պարզութեան ողին և արժանաւորութիւնը աղօտացած է օտար ազդեցութիւններից. Այս ամենի առաջն առնելու միակ միջոցը ի հարկէ կարող են լինիլ ազգային կրօնական դպրոցները միայն, իւրեանց ազգային և կրօնական անխառն ոգւովը և ողջութիւնովը, որոց մասին հրաւիրում եմ ամենայն Հոգաբարձուաց և խնամատարների ուշադրութիւնը.

Ծանօթ:

(2) Եկեղեցին որչափ որ իւր ներքին խորհրդովը սուրբ է, հոգևոր է և հասարակութեանը հոգևոր կերակուր մատակարարող, նոյնչափ ևս նորա արտաքին խորհրդակատարութիւնները, արարողութիւնները և ճէսերը մանաւանդ լծէ կրքե-

(1) Ցաւօք սրտի պէտք է ասել, որ շատ սակաւ են գտնուում Հայոց մէջ այնպիսի ընտանիք, որոց մէջ երեխայն կարողանայ ընդունել մեր

րութիւնները — այս ամենը կրօնական կրթութեան վերայ աւելի մեծ ազդեցութիւն ունին, քան թէ ուսումնարանը. ուսումնարանը կարող է միայն զրգուել աշակերտին դէպ ի նա, օգնել և ուղղութիւնից խտտումունքների յառաջն առնել. բայց որովհետև կրօնական դաստիարակութիւնը անհամեմատ կերպով հարկաւոր է ամեն մարդոյ (մանաւանդ թէ երիտասարդին) նոցա ամեն մի հոգեկան բաղաւորութիւնը և իմացականութիւնը նորանից կախուած լինելու պատճառաւ, ուստի ուսումնարանի կողմից ցոյց տուած մինչև անգամ փոքրիկ օգնութիւնը ևս թանկագին է: Այլ թէ ուսումնարանի ուրիշ ամեն պայմանները կրօնական դաստիարակութեան՝ ըստ բաւականին բարեյարմար չեն՝ այնու ամենայնիւ նորա զործունէութեան ասպարէզը ևս այնչափ նեղ

չէ, որ չարթէնայ նորան մշակագործելու: Առաջմունքը զարթնում է մարդոյ մէջ ըստ մեծի մասին մտակազմութիւնով. իսկ բանականութիւնը, որ ծնուցանում է իւր մէջ հաւատ և բարոյականութիւն, գտանում է իրան կերակուր նոյնչափ ևս մտակազմութեան շրջանի մէջ, որչափ որ զգացմունքի. և նոյն իսկ աստուածաճանաչութիւնը թափանծում է մարդոյ սրբի ներսերը մտակազմութեան ճանապարհոյ: Հոգեբանական նկատմամբ անստոյգ է այն կարծիքը թէ՛ որովհետև կրօնի մէջ տիրաբար գործողը զգացմունքն է, ուստի դուրս է նս ուսանելի աւարկանների շրջանից, և թէ՛ նա սահմանափակվում է ընտանեկան կրթութեան մէջ, բայց աւելի սխալ և հակառակ այն կարծիքին՝ է այն՝ թէ կրօնի դասատուութիւնը պէտք է յետաձգել մինչև այն ժամանակ, երբ աշակերտը արդէն հասած կ'լինէր իւր մտաւորական հասունութեանը, որովհետև կրօնը առաջադրում է մեծամեծ դժուարութիւններ ըմբռնողութեան համար. այս նշանակում է, « մի՛ մտաներ ջրի մէջ՝ մինչդեռ լողալ չես սովորած », : Պարզութեան վերաբերութեամբ զիտութիւնը բաժանվում է անթիւ աստիճանների. իսկ զգացմունքը նորա հետ միասին և հաւատը չեն պատկանում պարզ հասկանալիներին: Աշակերտներին կրօնականութեան մէջ կրթելու ժամանակը, աւելի ուշք պէտք է դարձնել այն կէտին, որ նոցա կրօնական հասկացողութիւնները հիմնելով աւելի կենդանութեան վերայ՝ քան թէ պարզութեան՝ երկիւղի տեղիք չի տալինք ասպագայ հասակում նոցա մտաբացութիւնից. երեխայն իւր մտաւոր զար-

ցողութիւնը պէտք է լինին գրաւիչ՝ սրտաշարժ և մարդոյ հոգւոյ մինչև խորքերը թափանծող. մի խօսքով նորա ներքին բարեկարգութիւնը պէտք է փայլի արտաքին բարեկարգութեան մէջ. բայց, զարձեալ ցուելով եմ՝ ասում, որ շատ վիճակաց մէջ ոչ թէ միայն զիւղերի, այլև քաղաքների եկեղեցեաց մէջ՝ ինչպէս և շատերը կ'փայնեն՝ խորհրդակատարութիւնների և արտաքին արարողութիւնների անբարեկարգութիւնը և ժամերգութեան անկարգ խառնաձայնութիւնները աւելի ձանձրացնում են եկեղեցասէր հասարակութեանը, թող թէ կարող լինէին նոքա զարթուցանել մարդկանց սրտերի մէջ կրօնական քաղցր զգացմունքները: Եւս մասին ուրիշ անգամ խոստանալով խօսել ընդարձակ կ'յուսամ, որ ամենայն Գերապատիւ Առաջնորդք ևս չեն զլանալ իւրեանց խորին ուշադրութիւնը կրօնականութեան այս կարևոր կէտին դարձուցանելու:

զացման աստիճանով նուրբ վերակացու-
 թիւններ ըմբռնելու շատ ընդունակ չ'է:
 Պէտք չ'է մոռանալ որ, կրօնի դասա-
 տուութեան ժամանակը (որովհետեւ այս
 տեղ ներգործում են առաւել բանակա-
 նութեան, զգացմունքի և կամքի վերայ
 քան թէ մտքի և յիշողութեան,) հար-
 կաւոր են ուսուցիչներին առանձին ձեռ-
 նարկութիւններ և կշռադատութիւններ:
 Այս տեղ զլնաւոր արդելատիթներից մի-
 նը կարող է լինիլ և այս, եթէ ուսուցչի
 իրա կրօնական համոզմունքը կատարելա-
 պէս համաձայն չ'են դասախօսութեան
 բովանդակութեանը: Արա դասատու-
 թիւնը չ'է կարող հասանել պողարերու-
 թեան, եթէ նորա հետ համեմատ չ'են և
 նոյն իսկ ուսուցչի ներքին համոզմունքը
 որովհետեւ նորա մէջ ամենահզօր կերպով
 ներգործում են զգայակցութիւնը և օրի-
 նակը: Աղեշնչութիւնը վերոյիշեալ միջոց-
 ներով փոխատրական է լինում, եթէ մին-
 չեւ անդամ սուտ ևս եղած լինէր նորա
 սկզբունքը: Ըստ այսմ ոչ մի դասատու
 կրօնի չ'է կարող հասանել այնպիսի հե-
 տեանքների, թէև փիլիսոփայ ևս եղած
 լինէր, ինչպէս նոքա, որոնք ներգործում
 են աշակերտների զգացմունքի վերայ. ար-
 դարև զգացմունքով ներընդունուած կը-
 բօնը այն ժամանակ միայն յուսալի ար-
 մատ է արձակում և զարգանում մինչև
 պողարերութիւն, երբ այդ զգացմունքը
 զուգակից է արտաքին ճիշտ սկզբունքնե-
 րի, և ներգործում են միշտ մարդոյ մէջ
 միևնոյն ուղղութիւնով: Այս տեղեց է
 ահաբողոքում զօրութիւնը բարեկարգ Ա-
 կեղեցւոյ, որ կայանում է Աստուածա-
 յայտնութեան ճշմարտութիւնների մեկ-

նութեան վերայ: Հողւոյ վերայ կրօնի
 ներգործելուն՝ և հետևաբար նորա ուս-
 ման՝ կեանքի վերայ ունեցած ազդեցու-
 թեանը ևս մեծապէս կ'օգնէ և այն՝ եթէ
 դասատուութեան մէջ առաջին աւանդե-
 լիքները լինին դիւրըմբռնելի և սրտաշարժ,
 զորօրինակ ուսումը ընդհանուր մեղան-
 չականութեան համար, ահեղ դատաս-
 տանի և յաւիտենական պատժի համար
 մեղաց քաւութիւն ստանալու կարելիու-
 թեան համար կենդանութեան ժամանակ:
 (Ծանոթութիւն)

Բազմապիսի Աստուծոյ Ստորագրութիւն:

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՇԻՐԵԿԵՅ

ԱՇԽԱՏԱԲԵԱԼ

Ի ՊՕՂՈՍ ՎԱՐԳԱՊԵՏԷ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ԸՆՈՒՐԵԱՆ ԳԵՏ.

Ի վերջին և բարձու ծայրի Արցախու
 Ապարքոսութեանն, կամ Չլարատու նա-
 հանդին, կացեալ կայ Աթոյ, կամ Աօր-
 թիւլի գաւառ, որ այժմ է սահմանա-
 գլուխ Օսմանեան Տիեզերակալութեանն
 ընդ Ռուսս:

Սա ի հիւսոյ ունի զԱխրքիլիկ, յարե-
 ւելից զՇիրակ Արևելեան, և զլերինս՝ ուս-
 ւոյ: Ի հարաւոյ զԱրաղգաւորս և զՕւարի-
 շատ, և յարևմտից զԱրաահան և զՉլլղր:

Այս գաւառ ընդարձակ, և մեծաւ մա-
 սամբ ամայի և աւերակ 1), ոչ միայն է եր-

(1) Յայս ընդարձակ գաւառի պատմեն լինել
 բազմաց և վաղնջուց աւերակաց, Գեղատեղիք բա-